

ԱԼԵՔՍԱՆԴԻ ԽԱԽԱՆՈՎԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր – Ալեքսանդր Խախանով, Վրաստան, Մոսկվա, համալսարան, արևելագետ, Լազարյան ճեմարան, հայոս, Քարթլոս, մշակույթ, երկխոսություն

Ծագումով վրացի հայտնի արևելագետ Ալեքսանդր Խախանովը իր բազմաթիվ գրքերում ու հոդվածներում յուրովի ներկայացրել է հայոց պատմության, հոգևոր մշակույթի և հայ ժողովրդի նիստուկացի առնչությունները վրաց նույնական երևույթներին՝ «ազգակցությանը»: Մույն հոդվածում, անդրադառնալով գիտնականի կյանքին ու գործունեությանը, միաժամանակ փորձում ենք պարզաբանել հումանիտար ոլորտի հայկական և վրացական նույնական գիտաճյուղերի միջև (փիլիսոփայություն, պատմություն, հնագիտություն, բանասիրություն, ազգագրություն, կրոն) խախանովյան զուգադրություններ անցկացնելու օրինաչափությունն ու սկզբունքները, դիտարկումներն ու բնութագրումները, ի հայտ բերած ընդհանուր եզրերը:

Ալեքսանդր Մուրմոնի Խախանովը [Խախանաշվիլի] գիտության վաստակաշատ գործիչներից է, հայտնի՝ նաև տարբեր լեզուներով ստեղծագործելու բացառիկ ունակությամբ, հարուստ և բազմաժանր ժառանգությամբ, ցավոք, նաև գիտական կարճատև կյանքով:

Ծնվել է 1864 թ. հունվարի 3-ին Վրաստանի Գորի քաղաքում, քահանայի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի գավառական դպրոցում, ապա ուսումը շարունակել Թիֆլիսի թիվ 1 դասական գիմնազիայում, որը 1884 թ. ոսկե մեդալով ավարտելուց հետո մեկնել է Մոսկվա, սովորել համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում՝ այստեղ ևս դրսևորելով գերազանց առաջադիմություն: 1888 թ. բուհն ավարտելուց հետո Ալ. Խախանովը պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի որոշումով պահվել է գիտամանկավարժական աշխատանքի նախապատրաստվելու համար, բայց նույն ուսումնական տարվա սկզբին հրավիրվել է Լազարյան ճեմարան՝ վրաց լեզու դասավանդելու (Լազարյան ճեմարանը 1827 թ. վերանվանվել էր *Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ*): 1894 թ. նշանակվել է արդեն ճեմարան-ինստիտուտի պրիվատ-դոցենտ, 1898 թ. ընտրվել գիտական խորհրդի քարտուղար, միաժամանակ վրաց գրականություն և Վրաստանի պատմություն է դասավանդել Մոսկվայի համալսարանում, զուգահեռաբար՝ ժամանակակից ռուս գրականություն և ռուսաց լեզու նաև մայրաքաղաքի կանանց գիմնազիաներում: Ալ. Խախանովի ժառանգու-

թյան կարևոր մաս է կազմում «Բրոքհաուզի և Եֆրոնի հանրագիտական բառարանում» տպագրած վրացի գրողների դիմանկարների շարքը¹: Այս շարքը և նյութական ու հոգևոր մշակույթի վերաբերյալ պատմաբանասիրական բազում գրքեր ու հոդվածներ նա գրել է ռուսերեն, ֆրանսերեն², գերմաներեն³ և վրացերեն ամենը փաստերի և տեղեկությունների հերթականությամբ, քաղաքական ու մշակութային հարաբերությունների բանիմաց քննությամբ, որով ձեռք է բերել մեծ համբավ, համարվել ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը:

Ունենալով գիտելիքների հարուստ պաշար՝ Ալ. Խախանովը նմանապես ուսումնասիրել է Վրաստանի տնտեսական խնդիրները, ֆեոդալիզմի յուրահատկություններն ու նշանակությունն այդ երկրում, վրացական թագավորության մասնատման և փոքրիկ իշխանությունների բաժանման պատճառները:

Նա վրաց գյուղացիության մեջ հարուստ և աղքատ շերտերի, թավադության խավի առաջացման խնդիրները առաջին անգամ փորձել է գիտականորեն վերլուծել, դրանք հիմնավորել երկրի տնտեսությամբ, իրողությունները կապել Ռուսաստանում ու Եվրոպայում ավատատիրության զարգացման հետ և բխեցրել այդ կարգերից:

Զգալի աշխատանք է կատարել նաև հնագիտության բնագավառում. հնություններ հայտնաբերելու նպատակով կազմակերպել է արշավախմբեր և ակտիվորեն մասնակցել դրանց պեղումներին, շրջագայել Վրաստանի ամբողջ տարածքում: Գտածոն հետազոտել և ամփոփել է «Հնագիտական արշավներ Կովկասում՝ 1892, 1893, 1895 թթ.» հատուկ ժողովածուում⁴: Նույն նպատակով ճանապարհորդել է մի շարք երկրներում՝ Անգլիա, Իտալիա, Ֆրանսիա և այլուր: Ռուսերեն լեզվով հրատարակել է «Ակնարկներ վրաց գրականության պատմության»⁵ քառահատոր, առաջին համակարգված հիմնարար աշխատությունը, որն ընդգրկում է քննարկվող թեման հնագույն ժամանակաշրջանից մինչև XIX դարի վերջը:

Փարիզի միջազգային ցուցահանդեսի բացման առիթով Ալ. Խախանովը ձեռնարկել, շարադրել և ֆրանսերեն լույս է ընծայել իր գիտական ձեռքբե-

¹ Գրողներին նվիրված հոդվածներից են՝ «Шота Руставели», «Царица Тамар», «Георгий Победоносец», «Вахтанг VI», «Амиреджиби», «Николоз Бараташвили», «Даниил Чонкадзе», «Георгий Эристави (Эристов)», «Александре Казбеге (Мочхубаридзе)»:

² Ֆրանսերեն լույս է ընծայել՝ **Khakhhanov A.**, Histoire de Géorgie, Paris-Tiflis, 1900 ; *idem* : La situation des Arméniens dans le royaume de Géorgie // « Journal asiatique », mars-avril 1898, և այլ գրքեր ու հետազոտություններ:

³ Գերմաներեն տպագրված աշխատանքներից հայտնի են՝ „Ueber den gegenwertigen Stand der grusinischen Philologie“ և „Grusisches Bruchstück der Kalilagu. Dimnag“ („Wiener Zeitschr. f. d. Kunde d. Morgenl“, t.VII, XIV):

⁴ «Археологические экскурсии на Кавказ» 1892, 1893 и 1895 гг., Москва, 1897. Տե՛ս նաև «Экспедиции на Кавказ», Москва, 1897:

⁵ **Хаханов А. С.**, Очерки по истории грузинской словесности, т. 1-4, Москва, 1901.

որ անվանի արևելագետը գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագրերի խմբագրակազմերի անդամ էր, ղեկավարում էր բազմաթիվ ասպիրանտների ու ասիստենտների ատենախոսություններ, ապա պարզ կդառնա նրա բազմաբեղուն գործունեության ընգրկումն ու ծավալը:

1902 թ. Ալ. Խախանովին հանձնարարվել է գրել Լազարյան ճեմարանի մասնագիտական երկու հաստատությունների՝ Դասական գիմնազիայի և Արևելյան լեզուների ֆակուլտետի հիմնադրման 30-ամյա պատմությունը, որը նա պատվով է իրականացրել¹: Դրանից բացի, նա հետագայում ճեմարանի կրթական և հետազոտական գործունեությանն է նվիրել ևս մեկ ուսումնասիրություն²:

Արևելագիտության հեղինակավոր մասնագետը, որքան հայտնի է, հայագիտական որևէ աշխատություն չի թողել (նրա երկերի մատենագիտական ցանկերում նման վկայություն չկա), բայց Վրաստանի պատմությանը, վրաց գրականությանն ու լեզվին, վրաց ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված երկերի ծանոթագրություններում, լուսանցքներում, տողատակերում լրացուցիչ տեղեկություններ է հաղորդել նաև նույն գիտակարգերի հայկական աղերսների վերաբերյալ, երբեմն՝ հայերեն, երբեմն՝ գրադարձ, երբեմն էլ՝ թարգմանաբար, և ըստ զուգադրական կանոնների՝ հանգել է բանիմաց եզրակացությունների, որոնք հարուստ նյութ են բովանդակում տարբեր գիտաճյուղերի հետազոտությունների համար: Ամեն դեպքում մակերեսային չի կարելի համարել նրա գիտելիքները հայկաբանության առումով: Հեղինակը պատմաբանասիրական այնպիսի աշխատանքներ է կատարել, որ մանրագնին ուսումնասիրություն կատարելու դեպքում դրանք կարող են նոր հոդվածներ գրելու ելակետային արժեք ունենալ տվյալ բնագավառի մասնագետների համար:

Դեռևս 1900-ական թվականների վերջերին Ալ. Խախանովը ծրագրել էր իր աշխատանքներն ի մի բերելու և առանձին գրքերով հրատարակելու գործը: Նախաձեռնությունը, սակայն, անկատար մնաց նրա վաղաժամ մահվան պատճառով:

Ճեմարանական տարիներին մտերմանալով հայ գործընկերների հետ և ձեռքի տակ ունենալով մատենադարանական հարուստ ձեռագրեր, տպագրված գրքեր, մամուլ և այլ նյութեր՝ Ալ. Խախանովը հետաքրքրություն է դրսևորել հայոց պատմության, հայ գրականության և արվեստի, առհասարակ, Հայկյան աշխարհի նկատմամբ³: Եթե հետազոտությունների ժամանակ

¹ «Тридцатилетие специальных классов Лазаревского Института Восточных языков», Москва, 1903.

² «Труды по востоковедению Лазаревского института», Москва, 1904, вып. XIX.

³ Խախանովի հայագիտական իմացության պտուղները քաղել ենք նրա ռուսերեն հոդվածների ու աշխատությունների ծալքերից: Մեր խորին համոզմամբ առաջադեմ գործիչն իր քայլով ցանկացել է ծառանալ XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայոց դեմ թշնամանք

նա պարբերաբար խորամուխ է եղել հայկական սկզբնաղբյուրների մեջ, որոշ ծանուցումներ լրացրել հայ ժողովրդական բանավոր խոսքի նմուշներով, վանքերի, ամրոցների, հուշարձանների, ձեռագիր մատյանների ու այլ հնությունների նկարագրությամբ, ապա այլևայլ մեկնաբանություններ հուշում են, որ անձամբ կամ աշխատակիցների ուղեկցությամբ շրջագայել է Հայաստանում, մասնավորապես՝ Երևանի նահանգում, Նոր Բայազետի գավառում, Նախիջևանի ամբողջ տարածքում, ինչպես նաև Վրաստանի հայաշատ վայրերում և անհրաժեշտ տեղեկություններ ամբարել տարածաշրջանում հարևանությամբ բնակվող հայ, պարսիկ, քուրդ, թուրք ժողովուրդների մենթալիտետի և նույնահունչ ու նույնաբնույթ երևույթների մասին: Մասնավորապես Նոր Բայազետի գավառի Երանոս գյուղում կատարած ազգագրական գրառումների հիման վրա նա հրատարակել է մի հետաքրքիր ուսումնասիրություն¹: Նախ անդրադարձել է Նոր Բայազետ անվան ծագմանը, ապա ներկայացրել իր տպավորությունները տեղացիների հարսանեկան ծեսերի, երգերի ու պարերի, կրոնական արարողությունների, հավատալիքների բնույթի, ընտանիք ստեղծելու ավանդույթի և ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի պարտականության մասին: Հեղինակի բնորոշմամբ՝ «գերդաստանի գլուխը» տղամարդն է՝ **տանուտերը**, որի իրավունքների մասին, սակայն, շատ չի խոսում: Փոխարենը հավուր պատշաճի անդրադառնում է ընտանիքի իգական սեռի՝ չափահաս թե անչափահաս, ներկայացուցիչների «մեծավորի»՝ **տանտիկնոջ** իրավունքներին: Վերջինիս «իշխանությունը» անխտիր տարածվում է հասուն տարիքի անձանց վրա, նրանց է կարգադրություններ անում՝ հարսներ թե աղջիկներ, ո՛վ պետք է կերակուր պատրաստի, ո՛վ սեղան զցի, ո՛վ կով կթի, ո՛վ գուլպա գործի, ո՛վ անկողին բացի, ո՛վ սենյակ հավաքի և այլն: Մեղանչողին կարող է պատժել՝ զրկելով ճաշից: Տանուտերը երբեմն կարող է առարկել կամ ուղղորդել տանտիկնոջը, բայց «առհասարակ նա չի խառնվում կնիկների գործերին»²:

Հիշատակության արժանի «Ուրվագծեր վրաց գրականության պատմության»³ գրքում Ալ. Խախանովն ուշադրություն է դարձրել Մայթ-Նովայի եռալեզու քնարին: Բայց մինչ բանաստեղծի խաղերին անցնելը նախապես քննում է վրացական էպոսը և պարականոն գրվածքները (ապոկրիֆ), պատմական ազդեցության շերտադասվածքով այն համադրում է հայկական, հունական, սլավոնական ապոկրիֆների հետ և որոշակի հետևությունների հանգում:

հրահրող վրացի որոշ մոլեռանդ ազգամուկների դեմ՝ թերևս քաջ գիտակցելով, որ հայերի դեմ նրանց գրածներն անհիմն մեղադրանքներ են:

¹ Տե՛ս **Хаханов А. С.**, Из жизни армян Новобаязетского уезда, Эриванской губернии // «Этнографическое обозрение», 1893, № 2, с. 155-163:

² Նույն տեղում, էջ 159:

³ **Хаханов А. С.**, Очерки по истории грузинской словесности, выпуск 3-й, литература XIII-XVIII вв., Москва, 1901.

Հայ եռամեծ աշուղ-բանաստեղծի կյանքին ու գործունեությանը նա նվիրել է ընդամենը երեք էջ (118-120) և նրա մասին գրել է. «Աղա-Մահմադ խանի կողմից Թիֆլիսը գրավելու ժամանակ սպանվեց Վրաստանի նշանավոր երգիչ, երաժիշտ Մայաթ-Նովան: Նա Հերակլ II-ի պալատական տրուբադուրն էր: Հարյուր տարի առաջ Թիֆլիսում Մայաթ-Նովայի անունը փառքով ու պատվով հնչում էր ամենուր՝ արքունի պալատից մինչև «խալխի» խրճիթը: Նա աղքատ հայորդի էր, արհեստով՝ ջուլհակ, կոչումով՝ երգիչ, երգահան: Պատանեկան-երիտասարդական տարիներին խնջույքասեր երգիչ էր, առաջացած տարիքում՝ կնոջ մահից հետո, ձեռնադրվել է կուսակրոն քահանա, ի վերջո՝ կյանքը զոհաբերեց որպես նահատակ. սպանվեց խաչը ձեռքին՝ թշնամու մուտքը հայոց եկեղեցի¹ արգելելու համար: Մայաթ-Նովան թուրքերի պահանջին՝ ուրանալ Քրիստոսին և դառնալ մուսուլման, և սպառնալիքին՝ նրանց իսկ լեզվով պատասխանել է շատ խրոխտ. «Չըխմանամ քլիսադան, դյոնմանամ իսադան» («Եկեղեցուց չեմ հեռանա, Հիսուսին չեմ ուրանա»): Եվ դրանք նրա վերջին խոսքերն էին: Մայաթ-Նովան իր երգերում պատկերել է սիրո վայելքը, գովերգել սիրած կնոջ հմայքն ու կատարյալ գեղեցկությունը, նա սիրո մեծ երգիչ է: Մայաթ-Նովան գրել է ոչ միայն հայերեն, այլև վրացերեն ու թուրքերեն, որոնք դեռևս անտիպ են»², և երգչի ոուսերեն թարգմանություններից հինգ խաղ է հրամցրել ընթերցողին³:

«Հայերի կացությունը վրացական թագավորությունում»⁴ հոդվածում Ալ. Խախանովը մասնավորապես գրում է. «Հաճախ դժբախտությունը միակ շաղախն է, որի վրա նոր շենք է բարձրանում..., և Վրաստանի ու Հայաստանի ուղիները մեզ պատմում են այդ երկու ժողովրդի, նրանց տանջանք-տառապանքների, ավերված շենքերի ու պղծված սրբավայրերի մասին»⁵:

Ալ. Խախանովն այստեղ վկայում է, որ վրացական տարեգրություններում հայերի մասին առաջին վկայությունները կապված են նրանց կողմից քրիստոնեություն ընդունելու հետ, չնայած հայերը և վրացիները գրեթե միաժամանակ են ընդունել քրիստոնեություն, բայց 451 թ.՝ Քաղկեդոնի ժողովից հետո, հայերն առանձնացան, որը, սակայն, նրանց հարաբերություններում սրման պատճառ չդարձավ, ավելին՝ վրացական նահանգներից մեկում տարածվեց «գրիգորյանական» հավատքը: Այնուհետև՝ ճիշտ է՝ ապարդյուն

¹ Խոսքը Թիֆլիսի հայոց Սուրբ Գևորգ եկեղեցու մասին է, որի գտնվելու վայրը և արտաքին պատկերը տեքստի տողատակում ներկայացնում է ինքը՝ Ալ. Խախանովը. «Վայր իջնելով Մայդան (շուկայական հրապարակ Թիֆլիսում՝ Ալ. Խախ.)՝ կտեսնես հարթ կտուրով, կապույտ գմբեթով մինչ այսօր կանգուն հայոց եկեղեցին. ինչ-որ ժամանակ այն գտնվել է Թիֆլիսի բերդամրոցի բնագծում»:

² **Хаханов А. С.**, Очерки по истории грузинской словесности, с. 219.

³ Տե՛ս նույն տեղում, էջ 220:

⁴ **Хаханов А. С.**, Положение армян в грузинском царстве // «Братская помощь пострадавшим в Турции армянам», Москва, 1897, с. 657-661.

⁵ Նույն տեղում, էջ 658:

եղան վրաց թագավորներ Բագրատ IV-ի (958-994), Դավիթ Շինարարի (1089-1125) և Թամար թագուհու (1184-1207) նրանց եկեղեցիները միավորելու փորձերը, բայց այս դեպքում ևս նախկին բարեկամական կապերը չխաթարվեցին, ընդհակառակը՝ Դավիթ Շինարարի գահակալության օրոք հայերը գտնվում էին կառավարության բարյացակամ հովանավորչության ներքո: Հենց Դավիթ Շինարարը, օգտվելով Խաչակրաց արշավանքներից, ոչ միայն իր երկիրն ազատագրեց թուրք-սելջուկներից, այլև գրավեց Հայաստանի մայրաքաղաք Անին և ավերված պետության շահերից ելնելով՝ հայերին վերաբնակեցրեց Վրաստանում՝ նրանց համար կառուցված քաղաքներում: Վրաց տարեգիրները, ինչպես նաև հայ պատմիչները (օրինակ՝ Մատթեոս Եղեասցին) վկայում են, որ Դավիթ Շինարարը, հայերի հանդեպ տածելով սեր ու բարյացակամություն, այցելում էր նրանց եկեղեցիները և օրհնություն ստանում հայ քահանաներից¹:

Վերոհիշյալ հարցերից բացի, Ալ. Խախանովը սևեռուն ուշադրության առարկա է դարձրել նաև Հայոսի և Քարթլոսի մասին ասքին. «Հայ և վրաց ժողովուրդները դեռևս վաղ անցյալից պատմության համար պահպանել են դիցաբանական մնայուն արժեք: Հին վրացական տարեգրությունն սկսվում է հայերի և վրացիների ծագման մասին լեգենդով, ըստ որի՝ Հայոսն ու Քարթլոսը Թորգոմի որդիներն են՝ հարազատ եղբայրներ, Հաբեթի սերնդի շարունակողները...»²: Նա նաև հավելում է, որ պատմության ամբողջ ընթացքում դա խաղացել է որոշակի դեր, որ վիպական այդ պատումը հիմնված է որոշակի փաստերի վրա. եղբայրության գաղափարը առաջադիմական է. նրանց պատմական ուղին է նպաստել նման գրույցների ծագմանը:

Օտար նվաճողների դեմ համատեղ պայքարի գաղափարը երկու ժողովուրդների համար կարևոր խնդիրը լինելով՝ դարերի ընթացքում եղել է առաջադեմ գործիչների ուշադրության կենտրոնում: Վրացի պատմիչ Լեոնտի Մրովելի³ մտահղացումը թեև առասպելաբանության ժանրից է, բայց գեղեցիկ է (Ալ. Խախանովը նույնպես ընդունում է դա), այդուհանդերձ ժողովուրդների ազգակցական կապի միտքն արժանի է ուշադրության: Դարեր շարունակ ապրելով հարևանությամբ՝ ընդհանուր են եղել մեր ժողովուրդների հաջողություններն ու անհաջողությունները, հաղթանակներն ու պարտությունները, վիշտն ու ուրախությունը: Պատմիչի նպատակն է հավատ ներշնչել հայերին ու վրացիներին՝ որպես եղբայրներ միավորվելու և ուս ուսի դիմակայելու հարավից ու հյուսիսից հաճախակի հարձակվող թշնամիներին, իսկ դա շատ ավելի հրատապ էր հենց միջնադարում: Պետք է

¹ Տե՛ս **Хаханов А. С.**, Положение армян в грузинском царстве, с. 658:

² Նույն տեղում, էջ 659:

³ Լեոնտի Մրովելի XI-XII դդ. պատմիչ է, «Քարթլիս ցխովրեբա» («Քարթլի կյանքը») ժողովածուի համահեղինակ, Վրաստանի պատմությունն սկսում է Հայաստանի և Վրաստանի Հայոսի և Քարթլոսի ծագումնաբանության լեգենդով:

ըստ արժանվույն գնահատել Լեոնտի Մրովելիին՝ նման գաղափար սերմանելու և ջատագովելու համար, որ համահունչ էր հայ և վրաց ժողովուրդների ցանկությանն ու շահերին: Նկատի ունենալով Ալ. Խախանովի գործունեության տարիները՝ այդ հարցի խախանովյան մոտեցումը նույնպես արժանի է համընդհանուր գովեստի:

Շարունակության մեջ հետագոտողն այն միտքն է արժարժում, որ վրացական կառավարությունը «հոգածություն էր ցուցաբերում հայերի հանդեպ, որոնք գյուղերում վրացիների հետ խառն էին ապրում, իսկ քաղաքներում, այլ օտարականների համեմատությամբ, մի տեսակ ինքնավարություն և առանձնաշնորհություններ էին վայելում»¹:

Թերթելով վրաց պատմիչների երկերը՝ նա աներկբա նշում է, որ վրաց արքաները հայ և վրաց բնակչության միջև երբեք տարբերություն չեն դրել՝ նրանք հայերին ընձեռել են հավատքի ազատություն, քաղաքական և քաղաքացիական հավասար իրավունքներ (խոսքը, անշուշտ, Վրաստանում բնակվող հայերի մասին է): Հայերը վայելում էին իրենց կրոնի ազատությունը: Հետաքրքիր է, որ վրացիները, ի սկզբանե լինելով ուղղափառ քրիստոնյաներ, հակադրվում էին միայն մուսուլմաններին, բայց ոչ առանձնացած հայ եկեղեցուն ու նրա հավատացյալներին: Հայերի առաքելականությանը զուգահեռ՝ XVI դարում Վրաստանում, առանց որևէ արգելքի, տարածվել է նաև կաթոլիկությունը: Երկու տարբեր եկեղեցիներին պատկանելու փաստը՝ հայադավան կամ վրացադավան լինելը, չէր խանգարում հայ և վրացի տղաներին ու աղջիկներին սիրահարվել, ամուսնանալ, կազմել ընտանիքներ և ստեղծել ազգակցական կապեր: Ավելին՝ նրանք ունեին ընդհանուր սրբեր, խորթ չէին ազգային սովորույթները, հաճախ սերտում էին նաև միմյանց լեզուն²:

Հայերը մասնակցել են Վրաստանի կառավարման գործերին: Հերակլ II-ի ժամանակ՝ XVIII դարի վերջերին գործող օրենքով՝ գահը հորից փոխանցվում էր որդուն, բայց ըստ Հովսեփ Կորգանովի կազմած նոր կանոնակարգի՝ գահը պետք է փոխանցվեր ոչ թե հորից որդուն, այլ ընտանիքի ավագին, այն է՝ հայ օրենսդիրը առաջնահերթությունը տալիս է թագավորի եղբայրներին: Փոփոխությունը արքունիքում խնդրահարույց է դառնում 1801 թ.՝ Գիորգի XII-ի մահից հետո, բայց և այնպես, ինչպես նշում է հեղինակը, փաստը լավագույնս վկայում է արքունիքում հայերի ունեցած ազդեցության մասին:

Միջին դարերից ի վեր զգալի վերելք են ապրում նաև գրական-մշակութային կապերը: Վրաց գործիչները թարգմանում կամ ըստ հայկական նմուշների ընդօրինակում³ են օրենսդրական, պատմագրական կարևորություն ունեցող մի շարք երկեր, հատկանշական է Մխիթար Գոշի «Դատաստանա-

¹ Хаханов А. С., Положение армян в грузинском царстве, с. 659.

² Տե՛ս նույն տեղում, էջ 661:

³ Մանրամասն տե՛ս **ՏԵՄԻՆՅԱՆ Ի. Կ.**, *სომხურ-ქართული ლიტერატურული ურთერთობები IX-X საუკუნეებში, თბილისი, 1944:*

գիրք հայոց»-ը: «Հայերի հանդեպ լինելով արտակարգ սիրալիր,- նշում է հետազոտողը,- դատարաններում օգտագործում էին Հայոց օրենքների այս ժողովածուն, որը վրացերեն է թարգմանել Վախտանգ արքայագնը»¹:

Ինչպես վկայում է հեղինակը, զինվորական և վարչական պաշտոնները նույնպես գրեթե հավասար չափերով տարածվում էին թե՛ վրացի, թե՛ հայ մասնագետների վրա, ընդ որում՝ հայերը Վրաստանին և վրացական բանակում ծառայում էին բոլորանվեր, ըստ ամենայնի արդարացնում իրենց և ըստ արժանվույն գնահատվում այդ նվիրվածության համար: Հատուկ վստահության արդյունք է և այն իրողությունը, որ հայ երիտասարդները գորակոչվում էին նաև արքունական և պետական անվտանգության գործառններում ծառայելու²:

Մեծ եռանդ ու նպատակասլացություն դրսևորելով՝ ժամանակի ընթացքում հայերը կարողացան հսկայական հարստություն կուտակել, ինչի արդյունքում նաև բարձր դիրքերի հասան պետական ապարատում: Նրանք Թիֆլիս, Գորի, Թելավի, Ախալցխա, Սղնախ քաղաքները Վրաստանում դարձրին առևտրական խոշոր կենտրոններ: Նրանց հարստանալը և պաշտոններ զբաղեցնելն այնքան գրավիչ էր դեռևս XVIII դարում, որ վրաց արքայորդիները, իշխանագուններն ու ազնվական փեսացուները ձգտում էին հարսնացուներ ընտրել հայ հարուստ ընտանիքների աղջիկներից³:

Վրաստանում բարձր դիրքի հասած հայագգի նշանավոր գործիչներից Ալ. Խախանովը հիշատակում է Թամար թագուհու արքունիքի մեծահամբավ խորհրդական Ջաքարիա Մխարգրձելիին (Երկայնաբագուկ), ավելի ուշ՝ ռազմական գործիչ, գեներալ մայոր Երեմիա Արծրունուն և ուրիշների, բայց հայերի ծառայություններն ու գործունեությունը միայն հրամանատարական կամ վարչական պաշտոններով չէին սահմանափակվում:

Պետության մեջ հասնելով պաշտոնների, ստանալով ազնվական և իշխանական տիտղոսներ՝ նրանք ժամանակի ընթացքում հետզհետե ամրապնդում էին իրենց դիրքերը: Օրինակ, Թումանովների (Թումանյան-Թումանիշվիլի) իշխանական տոհմի ներկայացուցիչները ժառանգաբար ստանում էին պետական քարտուղարի պաշտոնը, մելիքներ էին նշանակվում բացառապես հայագգի գործիչներից, իսկ Թիֆլիսի մելիքի պաշտոնը պարբերաբար տրվում էր Բեբութովների (Բեբության-Բեբութաշվիլի) իշխանական տոհմի հեղինակավոր որևէ անձնավորության:

Հերակլ II-ի օրոք Վրաստանում կային մեծ դրամագլխի տեր բազմաթիվ հայեր, որոնք վրաց ազնվականներին տրամադրում էին վարկեր, նյութական միջոցներով աջակցում երկրի կրթական օջախներին, վանքերին ու եկեղեցիներին:

¹ Хаханов А. С., Положение армян в грузинском царстве, с. 660.

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում:

Մեկ այլ բնագավառում ևս աչքի ընկան հայերը. նրանք արտադրողների և իրացնողների միջև դարձան առևտրաարդյունաբերական միջնորդ խավ, միաժամանակ կազմեցին քաղաքային «ուստաբաշիների» հատուկ միություններ՝ ենթակա ավագ մելիքին:

Վրաստանի գյուղաբնակ հայերը վրացի երկրագործների հետ զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, գինեգործությամբ, շերամապահությամբ, ինչպես նաև մերձարևադարձային կուլտուրաների մշակմամբ, իսկ քաղաքաբնակ հայերը հիմնականում հանդես էին գալիս վարչական աշխատանքների, գիտության և առևտրի ոլորտներում, մեծապես նպաստում երկրի շենացմանը, նրա հեղինակության բարձրացմանն ու ազդեցության ոլորտների ուժեղացմանը համառուսաստանյան առումով:

Վրաց ժողովրդի հետ ձեռք ձեռքի՝ հայ շինարարները, հատկապես Աղա-Մահմեդ խանի ավերիչ արշավանքից հետո, վերաշինեցին բազմաթիվ բնակավայրեր ու մշակութային օջախներ:

Ամենայն հավանականությամբ Ալ. Խախանովը հատկապես Լազարյան ճեմարանում ծավալած գործունեության տարիներին զբաղվել է նաև լեզվաբանական երևույթների ուսումնասիրությամբ, պարզել, որ հայերենն ու վրացերենը, տարբեր լեզուներ լինելով հանդերձ, իրենց շերտերում ունեն մի շարք ընդհանրություններ, և յուրովի դիտարկել է այդ առնչություններին վերաբերող հայեցակարգերը:

Այսպես, աշխատություններից մեկում¹ իր տեսադաշտում պահում է եվրոպացի լեզվաբանների վարկածները՝ լեզուների ծագման և նրանց՝ այս կամ այն լեզվաընտանիքին պատկանելու հարցեր: Ցուցաբերելով պատրաստականություն՝ ծանր ու թեթև է անում պատմահամեմատական լեզվաբանության հիմնադիր, գերմանացի Ֆրանց Բոպպի (1791-1867) և ֆրանսիացի ականավոր կովկասագետ, Եվրոպայում հայ-վրացական բանասիրության հիմնադիր Մարի Բրոսեի (1802-1880) կարծիքները հայոց և վրաց լեզուների ազգակցական կապերի մասին: Ֆ. Բոպպը դեռևս 1820-ական թվականներին վրացերենը համարել է հնդեվրոպական լեզու և հայերենի տեղն ու դերը որոշելու համար կարևորել վրացերենը: Մ. Բրոսեն, հայերենի և վրացերենի նույն լեզվաընտանիքին պատկանելու հարցում համամիտ լինելով Բոպպի տեսակետին, իր հերթին վճռականություն է դրսևորում և պնդում հակառակը, թե հայերենի միջոցով պետք է որոշել վրաց լեզվի տեղն ու դերը: Դա հիմնավորելու համար ֆրանսիացի կովկասագետը բերում է հայոց և վրաց բառարաններում հանդիպող նույնիմաստ ու նույնահունչ մի քանի օրինակ: Խախանովը, լեզվաբանների դատողությունները հանգամանալից քննության առնելով, ճշգրտում է. «Նրանցից ոչ մեկին չհաջողվեց և չէր հաջողվի համոզել վրաց լեզվի արիական ծագման իրենց տեսությունը, որովհետև

¹ **Хаханов А. С.**, Общий взгляд на состоянии грузинологии // «Чтения в Императорском обществе истории и древностей российских», 1889, кн. 2, Москва, 1889.

համեմատական լեզվաբանությամբ պարզվել է, որ հայերենը պատկանում է Հնդեվրոպական լեզվաընտանիքին, իսկ վրացերենը՝ Իբերականին: Մարդաբանական հետազոտություններով նույնպես հայերը և վրացիները տարբեր ռասաներ են՝ Բելոիդ (ըստ հեղինակի, իրականում՝ Եվրոպոիդ – Հ. Բ.) և Կովկասոիդ¹:

Խախանովը քննության է առնում նաև վրացական գրերի ստեղծման պատմությունը. «V դարի հայ պատմիչներ Կորյունը և Մովսես Խորենացին պնդում են, որ Մեսրոպը՝ հայոց այբուբենի ստեղծողը և լրացնողը, ստեղծել է նաև վրացական այբուբենը: «Մեսրոպի կողմից իբերիացիներին ցուցաբերված ծառայության մասին վրացական տարեգրությունները չեն հիշատակում»²: Եվ վստահաբար վկայում է գիտության մեջ ոչ այնքան հայտնի ոմն Ի. Լ. Օքրոմձեղովի (Օքրոմձեղաշվիլի) հողվածի ամփոփիչ դրույթները. «Քանի որ Մեսրոպը չգիտեր վրացերեն, ուրեմն չէր կարող սահմանել չիմացած լեզվի հնչյունները», այնուհետև ներկայացնում է նրա իսկ պնդումները, իբր՝

1) Վրաստանում այբուբենը գործածության մեջ է դրվել Փարնավազ արքայի կողմից՝ IV դարի վերջին կամ III դարի սկզբին՝ մ. թ. ա.,

2) եկեղեցական այբուբեն «խուցուրին» ոչ այլ ինչ է, եթե ոչ բարեփոխված «մխեդրուլի»,

3) եթե Մեսրոպը ինչ-որ մասնակցություն է ունեցել «խուցուրի» այբուբենի տառերը կազմելու գործում, ապա նրա ամբողջ օգնությունը կարող էր սահմանափակվել միայն ուղիղ գծերի ներմուծումով կլոր ձևերի փոխարեն՝ քաղաքացիական այբուբենի տառերի գծապատկերներում»³: Այս հարցում նա աներեր կանգնած է իր նախորդ և ժամանակակից վրացի գործընկերների դիրքերում:

Ալ. Խախանովը հաճախ ընդգծում է, որ օտար նվաճողների դեմ համատեղ պայքարի դաշնության գաղափարը խարսխված է հայ և վրաց ժողովուրդների համաձայնության ու համերաշխության վրա, այն կարևոր խնդիր է եղել դարերի ընթացքում, ուստի միշտ եղել է առաջադեմ գործիչների ուշադրության կենտրոնում: Նա ուսումնասիրության նյութ է դարձրել նաև հայ և վրաց բանահյուսությունը և որպես նմուշ բերել Մանասարի ու Մենեքերի մի մասին ավանդազրույցից մի հատված՝ այն ներկայացնելով «Դավիթ և Մհեր» ասքի սկիզբը. «Отрывок этот о Санасаре и Сенекериме представляет начало сказания о Давиде и Мегере»⁴: Ինչպես նշեցինք վերը, նա եղել է Նոր Բայազետ գավառում և տվյալ պատումը գրի է առել Երանոս գյուղի մի դպիրից:

Ալ. Խախանովը, անդրադառնալով Մինաս Չերազի (1852-1929)՝ Ալեք-

¹ Хаханов А. С., Общий взгляд на состоянии грузинологии, с. 4.

² Նույն տեղում, էջ 7:

³ Նույն տեղում:

⁴ Хаханов А. С., Из жизни армян Новобаязетского уезда, Эриванской губернии, с. 163.

սանդր Մակեդոնացու մասին Կոստանդնուպոլսում 80-ամյա ծերունուց գրառումին, որը պատումը լսել էր իր պապից, թարգմանաբար ռուս ընթերցողին է ներկայացնում հույն գորավարի մասին հեքիաթային տարբերով հագեցած հայկական այդ լեգենդի պյուժեն, որտեղ տեղեկացվում է, թե Ալեքսանդր Մակեդոնացին՝ Արևելքում հայտնի Իսկանդար անունով, գրավել էր ամբողջ մայրցամաքը, հարկ ու տուրք էր դրել ծովերի վրա և ամեն ճակատամարտից առաջ սխտորի սերմերից¹ քամած անմահական հյութ էր խմում՝ միշտ հաղթելու և հավերժ ապրելու համար...

Նույն հոդվածում Խախանովը վկայում է նաև ազգագրագետ, բանահավաք Երվանդ Լալայանի (1864-1931) «Աղեքսանդր Մակեդոնոս» գրույցների շարքը, որոնք համաշխարհային բանահյուսության տարածված պյուժեների տարբերակներ են՝ տպագրված «Ազգագրական հանդեսում»² (հայկական այդ պատումներից են՝ «Ալեքսանդրը և յուր հայրը», «Ալեքսանդրի գլխի եղջյուրը», «Ալեքսանդրը և յուր քույրը» և «Ալեքսանդրի մահը»):

Երվանդ Լալայանը Ալեքսանդր Մակեդոնացու մասին հայերի մոտ տարածում գտած գրույցները գրի է առել Օձուն գյուղում, և Խախանովը ռուսալեզու ընթերցողին հրամցնում է վերոգրյալ պատումների համառոտ պյուժենները:

Ալ. Խախանովը վրացերենից ռուսերեն թարգմանել և հրատարակել է նաև «Շուշանիկի տառապանքները»³ (հայ գրականության մեջ հայտնի է «Շուշանիկի վկայաբանություն» և «Շուշանիկ Վարդենի» անուններով), որը, ի դեպ, գոյություն ունի թե՛ հայերեն և թե՛ վրացերեն: Հուշարձանի երկլեզվյա խմբագրությունները թե՛ տարբերակները վաղուց ի վեր եղել են հայ, ռուս, եվրոպացի և վրացի բանասերների սևեռուն ուշադրության կենտրոնում: Երկը լույս է տեսել բազմիցս, թերևս ավելի հաճախ՝ վրացերեն: Հրատարակություններն իրականացվել են հայտնի և մատչելի ձեռագրերի հիման վրա: Նկատի ունենալով այդ լեզուներին միաժամանակ չտիրապետող որոշ հետազոտողների՝ նրանց համար դյուրին են դարձրել գիտական ուսումնասիրությունը՝ տեքստերը ներկայացնելով երկուստեք թարգմանությամբ. հայերենը՝ վրացերեն, վրացերենը՝ հայերեն: Կողմերն անդրադարձել են հարցին առնչվող պատմագիտական այլևայլ խնդիրների և գուգադրելով խմբագրությունները՝ ընդհանուր հայտարարի չեն հանգել: Յուրաքանչյուրը պնդել և պնդում է իր տեսակետը՝ սկզբնաղբյուրը հայերենն է կամ վրացերենը: Թերևս ավելորդ չէ նշել այս բնագավառում զգալի աշխատանք կատարած արտասահմանցի գիտնականների մոտեցումները, նրանք՝ գրեթե բոլորը,

¹ **Хакханов А. С.**, Легенды об Александре Македонском у армян // «Этнографическое обозрение», 1902, № 1, с. 113-114.

² Տե՛ս «Ազգագրական հանդես», X գիրք, Թիֆլիս, 1903, էջ 305-309:

³ Տե՛ս «Мученичество святой царицы Шушаник» // «Материалы по грузинской агиологии», Москва, 1910:

առանց երկբայելու առաջնահերթությունը տալիս են հուշարձանի հայկական տարբերակին (Նիկողայոս Մառ, Մարի Բրոսե, Բելգիացի Պոլ Պետերս և ուրիշներ), իսկ Ալ. Խախանովը և նրան նախորդած ու հաջորդած վրացի բոլոր բանասերները երկի բնագիրը համարել և համարում են վրացերենը:

Ալ. Խախանովն անհրաժեշտաբար ուշադրությունը բևեռել է նաև վրացական հեքիաթների և ապոկրիֆների վրա: Նա գրառումներ է կատարել, կազմել մեծածավալ ժողովածու և հայրենական հեքիաթների հիմնական մոտիվները, հատկապես դրական և բացասական կերպարները համադրել առավելապես հայկական հեքիաթների մոտիվների և գործող կերպարների հետ: Բացահայտելով դրանց ընդհանրություններն ու յուրահասկությունները՝ եզրաբանել է, որ կենդանական աշխարհի հիմնական կերպարները, իրենց գործելակերպով և բնավորությամբ առհասարակ ունեն բազում հետաքրքիր ընդհանրություններ՝ թերևս այն պարզ պատճառով, որ հայերը և վրացիները վաղուց ի վեր հարևան են, երկարատև շփումների ընթացքում փոխազդել են, երևույթ, որը առավել ակնհայտ է նրանց հեքիաթներում և բանահյուսական երկերում:

Ալ. Խախանովն անդրադարձել է նաև հայկական անունների ծագման խնդրին, ուսումնասիրել Թիֆլիսում, Մոնախում, Թելավիում, Գորիում և Վրաստանի այլ վայրերում վրացիների հետ հոծ խմբերով բնակվող հայերի շատ ու շատ անունները և հայտնաբերել, որ դրանք առկա են նաև վրացականում, ընդ որում՝ միևնույն արտաբերումով: Շրջագայել է Ախալցխայում ու Նախիջևանի գավառում և հանգել մեկ այլ դրույթի, որ չնայած հայերը նշված վայրերում ապրում են թուրքերից մեկուսի, բայց առանձնապես քիչ չեն այն հայուհիները, որոնց անունները մուսուլմանական ծագում ունեն: Վկայում է հայկականացված տասնյակ անուններ և լուսբանում ռուսերեն թարգմանությամբ:

Ալ. Խախանովի նպատակը հայ և վրացի ժողովուրդների միջմշակութային հիմնախնդիրների ուսումնասիրությունը չի եղել, ուստի բավարարվենք նրա ծավալուն աշխատություններից մեկի վերջաբանից խոստան մտքերի մի փունջ քաղելով: Հայերը և վրացիները դարեր շարունակ ապրել են կողք կողքի, ձևավորել են բարեկամական հարաբերություններ, գիտամշակութային ավանդույթներ, առանձնապես զարգացրել ու հարստացրել են հայ-վրացական հարաբերությունների ոլորտը և այդ ամենը գործելու հիմք են դարձրել իրենց համար, իսկ օտար նվաճողների դեմ միաբան պայքարի գաղափարը միշտ էական է եղել առաջադեմ գործիչների համար, որոնք բարձրաձայնել են դա, ուստի՝ «հետադարձ հայացք ձգելով մեր պատմական ուղու վրա, կարող ենք վստահաբար ասել, որ այս երկու ազգերի միջև թշնամության կամ անհանդուրժողության խնդիրներ չեն ծագել, դավանական թեժ պայքար չի եղել, երկկողմյա անընդունելի որոշումներ չեն կայացվել: Ուրիշ-

ների համար այս փաստերի հավաստումը թերևս լինի բոլորովին անսպասելի, բայց նրանք թող չմոռանան, որ՝ *dies diem docet...*¹:

Грачик Байрамян – *Жизнь и деятельность Александра Хаханова*

Автор статьи представил жизнь и деятельность Ал. Хаханова, наблюдения ученого относительно различных сфер грузиноведения и арменоведения (философия, история, археология, филология, этнография, религия), отметил сущность и содержание хахановских комбинаций отраслей науки, выявил общие грани. Российский востоковед в своих самых разных больших и малых исследовательских трудах максимально охарактеризовал связи армянской истории, духовной культуры и быта армянского народа с грузинскими явлениями и «родством». Исследования Хаханова были написаны в 1890-1900-х годах на русском языке.

Hrachik Bayramyan – *Alexander Khakhanov's Life and Activity*

The author presents Al. Khakhanov's life and activity, covers the scientist's observations related to different fields of Georgian and Armenian studies (philosophy, history, archaeology, philology, ethnography, religion), the nature and content of Khakhanov's comparisons of scientific disciplines, as well as general terms he has discovered. In his various long and short research articles the Georgian-Russian orientalist, to the extent possible, described the relations of Armenian history, spiritual culture, and lifestyle to Georgian kinship. Khakhanov's research was written in Russian in 1890-1900.

Ներկայացվել է 03.08.2020

Գրախոսվել է 10.09.2020

Ընդունվել է տպագրության 12.11.2020

¹ Տե՛ս **Хаханов А. С.**, Положение армян в грузинском царстве, с. 661: [Dies diem docet (լատ.) – Հաջորդ օրը նախորդ օրվա աշակերտն է – Հ. Բ.]: